



ԱՂՕԹՔ
ՍՈՒՐԲ ԱՆՏՈՆԻ

Հրաշագործ

հասիր օգնութեան

.....ին

(անուն ազգանուն)

**ԱՂՕԹՔ
ՍՈՒՐԲ ԱՆՏՈՆԻ**

**ԵՐԵՒԱՆ
2013**

ՏԱՍՆԵՐԵՔՕՐԵԱՅ
ԱՂՕԹՔ ԱՌ ՍՈՒՐԲ ԱՆՏՈՆ

1. Ո՛վ փառաւոր Սուրբ Անտոն,
որ Աստծուց ստացար մեռելներին
յարուժիւն տալու գորուժիւնը, վե-
րստին արթնացրո՛ւ իմ հոգին ան-
տարբերութեան թմբիրից եւ ըն-
դունի՛ր ինձ համար սուրբ եւ ջեր-
մեռանդ կեանք:

Փառք Հօր...

ԵԹԷ ՓՆՏՈՒՈՒՄ ԵՍ

Եթէ հրաշքներ ես փնտռում, տե՛ս,
թէ ինչպէս են փախչում մահը, սը-
խալը, փորձանքն ու սատանան.
տե՛ս, թէ ինչպէս են հիւանդներն
ապաքինւում:

Ծովը հանդարտուում է, շղթաները
փշրւում են, երիտասարդներն ու
ծերերը խնդրում են ու վերա-
գտնում առողջութիւնն ու կորցրած
ամէն ինչ:

Նահանջում են վտանգները, անհե-
տանում են կարիքները. այդ մասին
վկայում են բոլոր նրանք, ովքեր
վայելում են Պաղուայի Սուրբի
պաշտպանութիւնը:

ԱՂՕԹԵՆՔ...

Ո՛վ Տէր, ի յիշատակ Եկեղեցու Ա-
ւետարանի վարդապետ Սուրբ Ան-
տոնին, ուրախացրո՛ւ քո ընտանի-
քը, որպէսզի նրա ոգով զօրացած
արժանանայ մի օր վայելելու երկնքի
յաւիտենական երջանկութիւնը, մեր
Տէր Յիսուս Քրիստոսով: Ամէն:

2. Ո՛վ իմաստուն Սուրբ Անտոն,
որ քո վարդապետութեամբ դար-
ձար Սուրբ Եկեղեցու եւ աշխարհի
լոյսը, լուսաւորի՛ր իմ հոգին՝ բա-
ցելով այն աստուածային ճշմար-
տութեան առաջ:

(Փառք Հօր..., Եթէ փնտրում ես...,
Աղօթեմք...)

3. Ո՛վ բարեգութ Սուրբ Անտոն,
միշտ պատրաստ օգնութեան հաս-
նելու քեզ դիմողներին, իմ հոգին
էլ փրկի՛ր ներկայիս կարիքներից:

(Փառք Հօր..., Եթէ փնտրում ես...,
Աղօթեմք...)

4. Ո՛վ վեհանձն Սուրբ Անտոն, ով
ընդունելով երկնային ներշնչանքը՝
կեանքդ նուիրաբերեցիր Աստծուն

ծառայելուն, տո՛ւր, որ հլու հնա-
գանդ լսեմ Աստծոյ ձայնը:

(Փառք Հօր..., Եթէ փնտրում ես...,
Աղօթեմք...)

5. Ո՛վ Սուրբ Անտոն, մաքրութեան
իսկական շուշան, մի՛ թող, որ իմ
հոգին մնայ մեղքով արատաւոր-
ւած եւ տո՛ւր, որ կեանքն ապրիմ
անմեղութեան մէջ:

(Փառք Հօր..., Եթէ փնտրում ես...,
Աղօթեմք...)

6. Ո՛վ սիրելի Սուրբ, որի բա-
րեխօսութեամբ այնքա՛ն հիւանդ-
ներ բժշկուեցին, օգնի՛ր ինձ մաք-
րուելու յանցանքներից եւ չար
դիտաւորութիւններից:

(Փառք Հօր..., Եթէ փնտրում ես...,
Աղօթեմք...)

7. Ո՛վ Սուրբ Անտոն, որ քեզ նը-
ւիրաբերեցիր եղբայրների փրկու-
թեանը, առաջնորդի՛ր ինձ կենաց
ծովում եւ օգնի՛ր հասնելու յաւի-
տենական փրկութեան նաւահան-
գիստ:

(Փառք Հօր..., եթէ փնտրում ես...,
Աղօթեմք...)

8. Ո՛վ գթառատ Սուրբ Անտոն,
որ անհամար դատապարտեալների
ազատեցիր քո կեանքի ընթացքում,
խնդրի՛ր ինձ համար մեղքերի կա-
պանքներից ազատուելու եւ Տիրոջ
կողմից յաւիտեանս չմերժուելու
չնորհր:

(Փառք Հօր..., եթէ փնտրում ես...,
Աղօթեմք...)

9. Ո՛վ սքանչելագործ Սուրբ, որ արժանացար մարմնի անդամահատուած մասերը վերամիաւորելու պարգեւին, մի՛ թող, որ երբեւիցէ բաժանուեմ Աստուծոյ սիրուց եւ Եկեղեցու հետ միասնութիւնից:

(Փառք Հօր..., Եթէ փնտրում ես..., Աղօթեմք...)

10. Ո՛վ փրկիչ աղքատների, որ օգնում ես գտնելու կորած իրերը, տո՛ւր, որ երբեք մեղքի պատճառով չկորցնեմ Աստուծոյ հետ իմ բարեկամութիւնը, այլ հաւատարմօրէն պահպանեմ այն, ամբողջ կեանքի ընթացքում:

(Փառք Հօր..., Եթէ փնտրում ես..., Աղօթեմք...)

11. Ո՛վ ամենասիրելի Սուրբ, որ լսում ես բոլոր քեզ դիմողներին, քո մեծ գթասրտութեամբ ընդունի՛ր իմ աղօթքը եւ ներկայացրո՛ւ Տիրոջ, որպէսզի լսելի լինեմ Նրան:

(Փառք Հօր..., Եթէ փնտրում ես..., Աղօթեմք...)

12. Ո՛վ սիրելի սուրբ Անտոն, Աստծոյ խօսքի անխոնջ առաքեալ, սո՛ւր, որ խօսքով եւ օրինակով վկայեմ իմ հաւատի մասին:

(Փառք Հօր..., Եթէ փնտրում ես..., Աղօթեմք...)

13. Ո՛վ ամենասիրելի Սուրբ Անտոն, որ Պաղուայում ունես քո օրհնեալ գերեզմանը, նայի՛ր իմ կարիքներին. խօսի՛ր իմ մասին

*Տիրոջ հետ քո հրաշագործ լեզուով,
որպէսզի կարողանամ մխիթարուել
եւ լսելի լինել:*

(Փառք Հօր..., Եթէ փնտրում ես...,
Աղօթեմք...)





ՍՈՒՐԲ ԱՆՏՈՆԻ ԿԵԱՆՔԸ
ՀԱՄԱՌՕՏ

Պորտուգալիայի Լիսաբոն ֆաղափում ազնուականների ընտանիքում 1195ին ծնում է փոփրիկ Ֆերնանդոն, որի մասին մի օր լսելու եւ իմանալու էր ողջ ֆրիստոնեայ աշխարհը:

Հրաժարուելով բարեկեցիկ կեանքից ու ցանկանալով հագեցնել Աստծոյ հանդէպ տաժած սէրը՝ նա 1220ին անդամակցում է Օգոստինեանների միաբանութեանը, որտեղ ստանալով բարձրագոյն աստուածաբանական կրթութիւնն ձեռնադրում է ֆահանայ:

Երիտասարդ վարդապետը, գիտակցելով հարազատների մերձաւորութեամբ իր կոչմանը սպառնացող վրտանգը ու միաժամանակ լսելով Հիւսիսային Աֆրիկայում արաբների ձեռքերով նահատակուած միսիոներների մասին, միանում է Թրանսիպկեանների եղբայրութեանը եւ կոչւում եղբայր Անտոն: Սակայն աստուածային նախախնամութիւնը նրան հեռաւոր երկրներում մարտիրոսութեան փոխարէն բերում է Իտալիայի Բոլոնիա քաղաք, ապա՝ Թրանսիայի հարաւ: Վախճանում է 36 տարեկանում Իտալիայի Պադուա քաղաքում՝ 1231ի Յունիսի 13ին:

Սուրբ Անտոնը յայտնի է իր քարոզներով, որոնց շնորհիւ Կաթողիկէ Եկեղեցու վարդապետ է հռչակուում

1946ին: Նրան կոչել են «Հերետիկոսների մուրն»:

Պատմում են, որ մի օր, երբ հերետիկոսների լսարանը անհաղորդ է մնում իր խօսքին, մօտենում է ծովին ու ֆարոգում ձկներիին: Եւ ահա ծովից ձկները դուրս են գալիս՝ ունկնդրելու Սրբի խօսքը:

Այսօր էլ սրբի լեզուն անապական պահպանում է յատուկ անօթում՝ Պաղուայի իր անունով կոչուող տաճարում:

Համարում է կորած իրերի եւ մարդկանց պաշտպան, հրաշագործ հզոր սուրբ:

ԼԵԶՈՒՆ

Պաղուա ֆաղափում ամենամեծ բարեպաշտութիւնը վայելում է Սուրբ Անտոնի անապական լեզուն: Ահա 1263ի Սուրբ Բոնաւենտուրայի սրտաբուխ աղօթքը.

*Ո՛վ օրհնեալ Լեզու,
որ միշտ օրհնում էիր Տիրոջ
եւ շատերին էլ օրհնել էիր տալիս-
այժմ Աստծոյ մօտ
ակնյայտ են քո շնորհները:*

ԱՂՕԹՔ ԼԵԶՈՒԻ ՀԱՄԱՐ

*Ո՛վ հրաշագործ Սուրբ, քո լեզուի
արժանիքներով հայցի՛ր ինձ համար*

քաւութիւն բոլոր մեղքերիս, որոնք
գործել եմ իմ լեզուով, եւ շնորհի՛ր,
որ այլեւս երբեք չօգտագործեմ այն
իմ Տիրոջն ու մերձաւորին վշտա-
ցնելու համար:

Ձեմ ուզում այլեւս պղծել իմ լեզուն,
որի վրայ ընդունում եմ Յիսուսին՝
Ամենասուրբ Հաղորդութեան մէջ,
այլ քո օրինակով ուզում եմ այն
օգտագործել օրհնելու, գոհութիւն
յայտնելու եւ աղօթելու իմ Տիրոջ,
Նրան ճանաչել տալու, սիրելու եւ
ծառայելու՝ բարի խորհուրդներ
տալով եւ մղելով բարի գործերի:

Խօսի՛ր Տիրոջ մօտ մեզ համար,
փառաւորեա՛լ եւ օրհնեա՛լ լեզու,
որպէսզի արժանի լինենք Քրիս-
տոսի խոստումներին:

Ամենակարող եւ յաւիտենական
Աստուած, որ երանելի Սուրբ Ան-
տոնի՝ Քո սիրով բոցավառուած լե-
զուն հրաշագործ քարոզութեամբ
եւ սքանչելի վարդապետութեամբ
դարձրեցիր հռչակաւոր, ընդունի՛ր
մեր աղաչանքները, որպէսզի ար-
ժանանանք ապաշխարութեան շնոր-
հին եւ դրախտի յաւիտենական ու-
րախութեան, մեր Տէր Յիսուս
Քրիստոսով: Ամէն:

ԶՕՐԱԻՈՐ ԱՂՕԹՒՔ
ԱՌՒ ՍՈՒՐԲ ԱՆՏՈՆ

*Ո՛վ Սուրբ Անտոն, հեզ եւ
անբիծ շուշան կուսուլթեան,
օրինակ ժուժկայուլթեան, հայելի
մաքրագոյն անարատուլթեան,
սրբուլթեան հրաշալի աստղ,
դրախտի պայծառուլթիւն,
Սուրբ Եկեղեցու սիւն, շնորհի
քարոզիչ, ախտերը վերացնող,
առաքինուլթիւններ սերմանող,
մխիթարիչ վշտացեալների,
պաշտպան եւ պահապան
ընկճուածների, աստուածային
կարեկցուլթեան եւ անարատ
սիրոյ վառ բոց, խաղաղուլթեան
եւ համերաշխուլթեան սիրահար,
աշխարհիկ ունայնուլթիւններն
արհամարհող, հաւատի կանթեղ,*

հերետիկոսներին յաղթահարող,
մեծագոյն հրաշագործ, ապահով
օթեւան քեզ դիմողներին... դու
արժանացար քո թեւերով գրկելու
Ամենաբարձրեայի Որդուն:

Դու քո հրաշայի քարոզներով
մեղաւորների սրտում եւ
մտքում վառեցիր զղջման բոցը
եւ ապաշխարութեան աննկուն
կամօք:

Արդ ես՝ ողորմելի մեղաւորս,
համեստօրէն խնդրում եմ
քեզ՝ ընդունել ինձ քո հօր
հովանու ներքոյ. իմ մեղքերին
իսկական զղջում հայցիր,
իմ թշուառութեան խոնարհ
ընդունում, իմ սխալների համար
լաց լինելու շնորհ, աղօթքի համ
ու եռանդ, չարին հաստատուն
դիմակայում, Աստծուն՝ անսահման

գեղեցկութեանը եւ բարութեանը
հայեցողութեան պարգեւ:

Դու, որ Աստուածային սիրոյ
բոցավառ կրակ ես, վառի՛ր իմ
սառը եւ անտարբեր հոգին
աստուածային սիրով, իմ
անձը, աշխարհը, մարմինն ու
սատանան արժեգրկի՛ր ինձ
համար, առաջնորդի՛ր ինձ
առաքինութիւնից առաքինութիւն,
որպէսզի ապրելով յարատեւ
եռանդով եւ մահանալով
արդարների հետ՝ արժանանամ
քո պաշտպանութեանը՝ միանալու
երանելիների դասին երկնային
փառքի մէջ:

Պաղուայի Սուրբ Անտոն, աղօթի՛ր
մեզ համար, որպէսզի արժանի լի-
նենք Քրիստոսի խոստումներին:

ԱՂՕԹԵՆՔ

*Ամենագոր եւ յաւիտենական
Աստուած, որ Պաղուայի Սուրբ
Անտոնի միջոցով քո ժողովրդին
ընծայեցիր յայտնի քարոզիչ
եւ պաշտպան աղքատներին
ու տառապեալներին, նրա
միջնորդութեամբ տո՛ւր, որ
հետեւենք քրիստոնէական կեանքի
ուսուցումներին եւ փորձութեան
պահերին արժանանաք Քո
ողորմութեան փրկութեանը, մեր
Տէր Յիսուս Քրիստոսով: Ամէն:*

ՍՈՒՐԲ ԱՆՏՈՆԻ
ԱՂՕԹՔԻՆ ԱՌ ՅԻՍՈՒՍ

*Յիսո՛ւս, ողորմած Տէր,
արի՛ եւ մնա՛ մեզ հետ,
ների՛ր մեր մեղքերը, խաղաղութիւն
պարգեւիր մեզ: Վանիր մեր սրտե-
րից ամէն տեսակի վախ ու կասկած:*

*Ամրապնդիր մեր մէջ հաւատը՝
Քո չարչարանքների ու յարութեան
նկատմամբ, այնպէս, որ Քո շնորհով
յաւիտենական կեանքին արժանի
լինենք: Ամէն:*

*Տէ՛ր Յիսուս Քրիստոս, ում Խաչի
վրայ գամից խոցուած ձեռքերում
է մեր փրկութիւնը, փրկի՛ր մեզ
թշնամու յարձակումներից, լսի՛ր*

մեզ՝ պարզեւելով մեր մեղքերին
քաւութիւն, պաշտպանի՛ր մեզ մին-
չեւ վերջ, որպէսզի արժանի լինենք
միանալու Քեզ, ով նստում ես Հօր
աջակողմում: Ամէն:

ՍՈՒՐԲ ԱՆՏՈՆԻ
ԱՂՕԹՔՆ ԱՌ ՏԻՐԱՄԱՅՐ

Թագուհի մեր,
փառաւոր Աստուածամայ՛ր,
Քեզ ենք աղօթում:

Տո՛ւր, որ մեր սրտերը ողորդուած
լինեն աստուածային շնորհով եւ
փայլեն երկնային իմաստութեամբ:

Դարձրո՛ւ դրանք քո զօրութեամբ
ուժեղ եւ առաքինութիւններով հա-
րուստ: Մեզ պարուրի՛ր ողորմու-
թեան շնորհով, որպէսզի ստանանք
մեր մեղքերի քաւութիւն:

Օգնի՛ր մեզ այնպէս ապրելու, որ
արժանանանք երկնային փառքին
ու երանութեանը:

Սա մեզ շնորհել է Քո Որդին՝ Յի-
սուս Քրիստոս, որ քեզ բարձրա-
ցրեց հրեշտակներից էլ վեր, Քեզ
պսակեց թագուհի եւ նստեցրեց
փառահեղ գահին: Նրան փառք ու
պատիւ յաւիտեանս յաւիտենից:

Ամէն:

ԱՂՕԹՔ ՍՈՒՐԲ ԱՆՏՈՆԻՆ
ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ո՛վ Տէր, արարիչ եւ պահպանիչ
մարդկանց եւ ամենայն բանի, որ
սիրում ես անմեղութիւնն ու բա-
րութիւնը, օրհնի՛ր մեր մանուկնե-
րին, որոնց մաքրութիւնը, պարզու-
թիւնն ու շնորհը նուիրում ենք
քեզ: Պահպանի՛ր նրանց մէջ կեան-

քի բարութիւնը, պարգեւի՛ր անաւի
գուրգուրանք ու ծնողների ապա-
հով առաջնորդութիւն: Նրանց օգ-
նի՛ր մեծանալ հաւատի ու իմաս-
տութեան մէջ, պահպանի՛ր նրանց
հոգու եւ մարմնի չարիքից:

Ո՛վ Սուրբ Անտոն, լսելի՛ դար-
ձրու մեր աղօթքը քո հօր միջնոր-
դութեամբ:

Մեզ ու բոլոր մանուկներին մօտ
եղի՛ր եւ մխիթարի՛ր քո պաշտպա-
նութեամբ: Ամէն:

ԽՆԴՐԱՆՔԻ ԱՂՕԹՔ
ՍՈՒՐԲ ԱՆՏՈՆԻՆ

Յիշի՛ր, ո՛վ սիրելի սուրբ Անտոն,
որ մշտապէս օգնել ու մխիթարել
ես բոլոր նրանց, ովքեր իրենց կա-
րիքների պահին դիմել են քեզ:

Մեծ վստահութեամբ ոգեւորուած
եւ համոզուած, որ աղօթքս զուր չի
անցնի, դիմում եմ քեզ, ով Տիրոջ
մօտ այնքան հարուստ ես արժա-
նիքներով. մի՛ մերժիր իմ աղօթքը,
այլ քո ողորմածութեամբ հասցրո՛ւ
այն Աստծոյ գահին:

Իմ կարիքի եւ նեղութեան այս պա-
հին հասի՛ր օգնութեան եւ ստացի՛ր
ինձ համար ջերմեռանդօրէն հայ-
ցած շնորհս, եթէ այն բարի է իմ
հոգու համար (նշել խնդրանքը):

Օրհնի՛ր իմ գործն ու ընտանիքը.
հեռո՛ւ պահիր այն հիւանդութիւն-
ներից, մարմնի եւ հոգու վտանգ-
ներից:

Տո՛ւր, որ ցաւի եւ փորձութեան
ժամին ամուր մնամ հաւատիս եւ
Աստծու սիրոյ մէջ:

Ամէն:

ԱՂՕԹՔ ԿՈՐԱԾ ԻՐԵՐԸ
ԳՏՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

*Ո՛վ մեծն Սուրբ Անտոն, բարու-
թեամբ լի առաքեալ, որ Աստծուց
ստացար կորած իրերը գտնելու
բացառիկ կարողութիւն, հասիր
ինձ այս պահին, որ քո օգնութեամբ
գտնեմ փնտռած իրերս...*

*Ընդունիր նաեւ ինձ համար ան-
սասան հաւատ, կատարեալ հնա-
զանդութիւն շնորհի ներշնչանքնե-
րին, աշխարհի սին հաճոյքներից
նողկանք եւ յաւիտենական բարու-
թեան անասելի ուրախութեան
վառ ցանկութիւն: Ամէն:*

ԱՂՕԹՔ ՔԱՀԱՆԱՅ ԲԱՐԵԿԱՄԻ
ՀԱՄԱՐ

Ով Սուրբ Անտոն, բարեկամ Աստուծոյ եւ բարեկամ աղքատների, Ջայն Աստուծոյ եւ ճայն մարդկանց, Երիտասարդ՝ ընդունակ երիտասարդների հետ խօսելու, Ուժեղ՝ ընդունակ ուժեղներին դիմակայելու Աւետարանի գինաթափող զօրութեամբ:

Այսօր աշխարհն Աւետարանի անյապաղ կարիք ունի:

Օգնի՛ր քո այս ծառային (անունը) լինելու Յիսուսին անխոնջ աւետարանող աշխարհի ճանապարհներին եւ գեխ հասարակութեան խաւար ուղիներին:

*Օգնի՛ր նրան, ո՛վ Տէր, Աւետարանն
իր կեանքով քարոզելու՝ պարզու-
թեամբ, խոնարհութեամբ եւ աղ-
քատութեամբ, վկայելու քո մե-
ծութիւնը, վեհութիւնը եւ հարս-
տութիւնը: Ամէն:*

ԱՂՕԹՔ ԿՈԶՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

*Քրիստոս ձեռքեր չունի. միայն
մեր ձեռքերն ունի այսօր՝ իր
առաքելութիւնն անելու համար:*

*Քրիստոս ոտքեր չունի. միայն
մեր ոտքերն ունի՝ մարդկանց
իր արահետներով առաջնորդելու
համար:*

*Քրիստոս շուրթեր չունի. միայն
մեր շուրթերն ունի՝ այսօրուայ*

մարդկանց իր մասին պատմելու
համար:

Քրիստոս միջոցներ չունի. միայն
մեր օգնութիւնն ունի՝ մարդկանց
դէպի իրեն տանելու համար:

Մենք միակ Աստուածաշունչն
ենք, որ մարդիկ դեռեւս կարդում
են, Աստուծոյ միակ Մատեանն ենք՝
գրուած գործերով եւ խօսքերով:

Ո՛վ Սուրբ Անտոն, օգնի՛ր եւ ու-
րախութեամբ լցրու այն երիտա-
սարդների սրտերը, ովքեր ցանկա-
նում են Տիրոջը նուիրել սեփական
կեանքը՝ քայլելու սրբութեան գե-
ղեցիկ ուղիով՝ խոնարհութեամբ եւ
մաքրութեամբ եւ Աւետարանական
ցնծութեամբ: Ամէն:

ԱՂՕԹՔ ՍՈՒՐԲ ԱՆՏՈՆԻ
ԲԱՐԵԽՕՍՈՒԹԵԱՄԲ

*Ողորմած եւ բարեգուլ չայր, որ
Սուրբ Անտոնին ընտրեցիր որպէս
Քո Աւետարանի վկայի եւ խաղա-
ղուլթեան պատգամաբերի, լսի՛ր
իմ աղօթքը, որ Նրա բարեխօսու-
լթեամբ բարձրացնում եմ Քեզ:*

*Սրբացրո՛ւ իւրաքանչիւր ընտա-
նիք, օգնի՛ր նրանց աճելու հաւա-
տի մէջ, պահպանի՛ր նրանց միու-
լթիւնը, խաղաղուլթիւնը եւ ան-
ղորրը:*

*Օրհնի՛ր մեր զաւակներին, պաշտ-
պանի՛ր երիտասարդներին:*

Բացի՛ր իմ հոգին եղբայրներիս
հանդէպ վեհանձն եւ անկեղծ սի-
րով, այնպէս, որ տրամադիր լինեմ
ընդունելու եւ օգնելու նրանց, երբ
դրա կարիքն ունենան, հասնելու
նրանց, երբ հիւանդ են, տառապեալ
կամ միայնակ:

Ինձ ամէն օր քո մտերմութեան
մէջ պահի՛ր եւ պարգեւի՛ր ինձ Քո
սէրը: Ամէն:

ԱՂՕԹՔ ԿՐՕՆԱԻՈՐԱԿԱՆ ՈՒԽՏԵՐ
ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՐԱԶԱՏԻ ՀԱՄԱՐ

*Սուրբ Հայր, վեհանձն բաշխող
ամէն բարիքի, ընդունի՛ր խոնարհ
երախտագիտութիւնս Քո բարիքնե-
րի համար, փրկի՛ր (անուն)ին բո-
լոր վտանգներից Քո թեւերի հո-
վանու ներքոյ, տո՛ւր նրան իմաս-
տութիւն, խաղաղութիւն եւ առող-
ջութիւն՝ Քեզ ծառայելու խոնար-
հութեամբ, անհուն ուրախութեամբ
եւ հաւատարմութեամբ, մեր Տէր
Քրիստոսի միջոցով: Ամէն:*

ՅԻՇԱՏԱԿ
ՄՇՏՆՁԵՆԱԻՈՐ
ՈՒԽՏԱԴՐՈՒԹԵԱՆ
ՄԽԻԹԱՐԵԱՆ ԵՂԲԱՐՑ

ԵՂԲ. ԱՆՏՈՆ
ԳՐԻԳՈՐԵԱՆ

ԵՂԲ. ԳԵՈՐԳ
ՍԱՐԳԻՍԵԱՆ

Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՎԱՆՍ Ս. ՂԱԶԱՐՈՒ

07 ՄԱՐՏ 2013

*Տէրն իր Աջով քեզ օրհնի,
լիացնի իր հարստութիւններով,
պահպանի իր շնորհի մէջ,
քո կեանքը սուրբ գործերով
պտղաբեր դարձնի,
որպէսզի կարողանաս արժանանալ
յաւիտենական ժառանգութեան:
Ամէն:*

ՍՈՒՐԲ ԱՆՏՈՆԻ



Սրբավայրը
Պաղոա



Անապական լեզուն